

ԻՍՊԱՆՆԵՐՆ *tahúr* «ԽԱՂԱՄՈՒ» ԲԱՌԻ
ՍՏՈՒԳԱՄԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ըստ իսպաներենի ակադեմիական բառարանի՝ *tahúr* բառն ունի հետևյալ իմաստները՝ 1. խաղամուլ, մուլխաղերի սիրահար 2. հմուտ խաղացող, վարպետ 3. խաղանենգ, խարդախ: Նույն բառարանը տալիս է *tahúr* բառով կազմված ևս երկու ձև՝ *tahurería* և *tahuresco*, որոնցից առաջինն արտահայտում է 1. խաղատուն 2. խաղամուլություն 3. խաղանենգություն իմաստները, իսկ երկրորդը՝ «խաղամուլի, խաղամուլներին բնորոշ» նշանակումը: Ճիշտ է, *tahuresco* տարբերակում չի նշվում «խաղանենգի, խաղանենգներին բնորոշ» իմաստը, սակայն վերջինիս առկայությունն ինքնին ենթադրելի է, քանի որ բառահոլովածում գրված է՝ «*tahur*-ներին բնորոշ», որը կարող է վերաբերել ինչպես խաղամուլներին, այնպես էլ խաղանենգներին:

Չարկ է նշել նաև, որ իսպաներենում *tahúr* բառն առավել բնորոշ է ժողովրդական-խոսակցական լեզվին և ունի հստակորեն արտահայտված ծաղրական երանգավորում:

Իսպաներենում *tahúr* բառի հին ձևն է *tafur*, որն այժմ սահմանափակ գործածություն ունի: Սրա ածանցյալներն են *tafurería* և *tafuresco* կազմությունները, որոնց այսօր փոխարինում են վերը նշված *tahurería* և *tahuresco* տարբերակները: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում գործել է *f > h* հնչյունափոխությունը, որը իսպաներենում այժմ է ընկնում զգալի արդյունավետությամբ:

Ըստ իսպանագիտության մեջ առավել տարածված կարծիքի՝ *tafur* բառի ծագումը հայտնի չէ, և մինչև օրս առաջ քաշված ստուգաբանական տարբերակներից ոչ մեկը սպառնիչ պատասխան չի տալիս բոլոր հարցերին: Սակայն, զուտ հայագիտական տեսանկյունից, մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան *tafur* բառի ստուգաբանության վերջնական արդյունքը, որքան այդ ստուգաբանությանն առնչվող հայագիտական նյութը:

Ներկայացնենք նախ իսպանագիտության տվյալները:

1. Վրգենտինացի լեզվաբան Պեդրո Մոնլաուն իսպաներենի լավագույն ստուգաբանական բառարաններից մեկի հեղինակը, քննության է առել *tahúr* «խաղամուլ» բառի ստուգաբանության երկու վարկած՝ գրելով հետևյալը. «Չամարվում է արաբական բառ, սակայն հայտնի չէ, թե որ բառին պետք է կցվի. ոմանք հղում են *tahur* «թեթևամիտ, անխոհեմ մարդ» բառը, ուրիշներն առաջարկում են *dahul* «խարդախ, կեղծամիտ» ձևը: Առաջինը չունի բավարար արտահայտչականություն, իսկ երկրորդը մերժվել է Դոգիի կողմից, քանի որ չի պատկանում ժողովրդական-խոսակցական լեզվին և առաջ է բերում հնչյուն-

նական դժվարություններ՝ բառասկզբին սպասվող *ժ*-ի փոխարեն ունենալով *չ*-ինչյունը»²:

2. Ինչպես նշում է կատալանցի խոշորագույն բառարանագիր ժոան Կորոմինեսը (խապաներեն տառադարձմամբ Խուան Կորոմինաս) իր «Խապաներեն լեզվի ստուգաբանական բառարանում», *iahúr* բառն առաջին անգամ գրավոր ավանդվել է 1335 թ., իսկ *rafur* տարբերակը գալիս է 1260 թ-ից: Նա ճշտում է նաև, որ այդ բառը տարածված է Պիրենեյան թերակղզու և Ֆրանսիայի բոլոր ռոմանական լեզուներում: Նույն բառարանից տեղեկանում ենք, որ *rafur* բառով նախապես նշանակելիս են եղել խաչակիրների բանակի ոչ կանոնավոր զորախմբերի անդամներին, որոնք զբաղվում էին թալանով և դիակապտությամբ: Կորոմինեսը գտնում է, որ 11-րդ դ. վերջերից տեղի է ունենում իմաստափոխություն. «ոչ կանոնավոր բանակի զինվոր» իմաստից առաջանում է «վատաբարո մարդ» նշանակումը, իսկ սրանից «խաղանենգ, խարդախ» իմաստը: Կորոմինեսը *rafur* բառի ծագումը համարում է անհայտ, սակայն բառահոդվածի վերջում ավելացնում է հետևյալը. «Թերես, հայերեն *thaphúr* «լքված», «մերկ», «թափառական» (բառից), անվանում, որով հայերը կոչած կլինեին օժանդակ բանակի զինվորներին Անտիոքի պաշարման ժամանակ»³:

Ցավոք սրտի, Կորոմինեսը չի նշում, թե ո՞ր գրքից է վերցրել հայերեն *thaphur* (թափուր) բառը, որի բուն իմաստն է «պարապ, դատարկ»: Ինչ-որ չափով այս իմաստին մոտ են «լքված» (իմա՝ «դատարկված») և «մերկ» (իմա՝ «զրկված», «դատարկված») նշանակումները: Գալով «թափառական» իմաստին (իսպ. *vagabundo*), ապա, ըստ երևույթին, Կորոմինեսը նկատի է ունեցել միևնույն *թափ* արմատից կազմված *թափառ*- հիմքը:

Այս առաջարկի կարևորությունն այն է, որ Կորոմինեսը, թեկուզ կասկածով, չի քացառում տվյալ դեպքում հայերենի ուղղակի ազդեցությունը իսպաներենի վրա: Հայերն ու իսպանացիները շփվել են միմյանց հետ խաչակրաց արշավանքների ժամանակ, և այդ շփումների արդյունքում հայերենից իսպաներենին է անցել *թափուր* բառը՝ կրելով որոշակի իմաստափոխություն:

Ավելացնենք նաև, որ ժ. Կորոմինեսի հիշյալ բառարանն առաջին անգամ լույս է տեսել 1961 թ. և ունեցել է մի շարք լրամշակված հրատարակություններ: Վերջին անգամ վերահրատարակվել է 1996 թ.:

3. Խապանացի նշանավոր լեզվաբան, ակադեմիկոս Սնտոնիո Տոբարը *rafur* բառը բխեցնում է արաբերեն *zafur* «շահող, գործարքներից շահույթով դուրս եկող» ձևից, սակայն չի անդրադառնում հնչյունական դժվարությունների հարցին⁴:

4. Չնայած իսպանագիտության մեջ ժ. Կորոմինեսի և Ա. Տոբարի անառարկելի հեղինակությանը, *iahúr* բառի ծագման վերաբերյալ նրանց

կարծիքները լայն տարածում չգտան: Իսպաներենի ակադեմիական բառարանի նախավերջին հրատարակության մեջ (1992 թ.), օրինակ, այդ բառի ծագման մասին ոչինչ չի ասվում⁵, իսկ հռչակավոր *Clave* բառարանի վերջին հրատարակությունում (2001թ.) *rafur*-ը համարվում է անհայտ ծագման բառ⁶:

5 2001 թ. լույս է տեսնում իսպաներենի ակադեմիական բառարանի լրամշակված տարբերակը, որն էապես տարբերվում է նախորդ հրատարակություններից: Ներմուծված փոփոխություններից է նաև *tahúr* բառի ստուգաբանությանը վերաբերող հատվածը:

Ըստ այս բառարանի հեղինակների՝ իսպաներեն *tahúr* (<*rafur*) բառը ծագում է արաբերեն *rafur* ձևից (իմաստը չի նշվում), իսկ վերջինս գալիս է հայերեն *թագավոր* կազմությունից, որը բառարանում հիշատակված է *tagevor* ձևով⁷: Ուշագրավն այն է, որ այս ստուգաբանությունը նշվում է ոչ թե որպես վարկած կամ նոր առաջարկ, այլ պարզապես իբրև անառարկելի իրողություն, քանի որ բառարանի հեղինակները չեն գործածել *հավանաբար*, *թերևս*, *գուցե* արտահայտություններից որևէ մեկը, որը կարող էր կասկածներ առաջացնել այդ ստուգաբանության վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք, այս առաջարկը նույնպես կողմնորոշված է դեպի հայկական լեզվոլորտը, քեև սկզբունքորեն տարբերվում է Կորոմինասի առաջարկից: Կորոմինսը, ինչպես նշվեց, իսպաներեն *rafur* բառը համարում էր հայերենից կատարված անմիջական փոխառություն, մինչդեռ ակադեմիական բառարանի հեղինակները հավաստի են համարում արաբական միջնորդությունը՝ ելակետ ունենալով հայերեն *թագավոր* բառը:

Ինչ վերաբերում է իմաստային տարբերությանը՝ «թագավոր» > «խաղամուլ», ապա իսպաներենի ակադեմիական բառարանը տալիս է շատ յուրօրինակ քացատրություն՝ ներկայացնելով հետևյալ նկատառումը. «... հայերեն *tagevor*, այս ժողովրդի թագավորների տիտղոսը՝ հետագայում բացասական իմաստով, որը գալիս է խաչակիրների հետ նրանց լարված հարաբերություններից»⁸:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն բառարանն արտացոլում է ոչ միայն այդ լեզվի բառապաշարում նկատված հիմնական տեղաշարժերը, այլև իսպաներենի ստուգաբանության նորագույն տվյալները՝ կարելի է ասել, որ *tahúr* բառի վերը նշված ստուգաբանությունը իսպանագիտության վերջին խոսքն է: Պետք է չմոռանալ նաև, որ այդ բառարանը *նորմատիվ* է և արտահայտում է իսպաներենի թագավորական ակադեմիայի պաշտոնական կարծիքը:

Այդուհանդերձ, չի կարելի ասել, թե առաջարկվող նոր տարբերակը վերջնականապես լուծում է *tahúr* «խաղամուլ» բառի ստուգաբանության հարցը: Ամենայն հավանականությամբ բառարանի հեղինակները բավարար չափով ծանոթ չեն եղել հայագիտության տվյալներին և իրենց եզրակացություններում հենվել են ոչ ճիշտ տեղեկությունների վրա: Այդ իսկ պատճառով

անհրաժեշտ է նրանց կարծիքը, ինչպես նաև *isahúr* բառի հայկական ծագման վերաբերյալ մնացած առաջարկները զննհատել հայագիտական տեսանկյունից՝ կատարելով որոշ ճշգրտումներ և լրացումներ:

Պ. Մոնլաուի և Ա. Կոբարի բերած արաբական զուգահեռներն անընդունելի են այն պարզ պատճառով, որ իսպաներեն *iafúr* բառի նախնական իմաստը չի եղել «խաղամուլ» կամ «խաղանենգ», այլ «ոչ կանոնավոր բանակի անդամ», ինչպես որ նշում է Ժ. Կորոմինեսը:

Իմաստային նկատառումներով կասկածելի է նաև *iafúr* ձևը հայերեն *թագավոր* բառից բխեցնելու փորձը, չնայած ինչ խոսք, հնչյունապես անհնար չէ *iakfur > iafur* անցումը: Ասվածից կարելի է եզրակացնել, որ իսպանական *թագավորական* ակադեմիայի բառարանում տեղ գտած նոր առաջարկը բավարար հիմքեր չունի:

Սուսվել հավանական է թվում Ժ. Կորոմինեսի առաջարկը՝ կապված հայերեն *թափուր* բառի հետ, որը, սակայն, ունի որոշ պարզաբանումների կարիք:

Կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է հայերեն *թափ* արմատով կազմված որևէ բառի՝ չբացառելով այլ բառերի հետ բաղադրվելու հնարավորությունը: Կառուցվածքային տեսակետից իսպաներեն *iafúr* բառին բավականին մոտ է հայերեն *թափուր* բառը, որի իմաստն է «եկեղեցական հանդես շրջագայությամբ»: Գտականշական է, որ որոշ բարբառներում *թափուր* բառը ունի *թափուր* ձևը, որն, ըստ էության, կրկնում է իսպաներեն *iafur*-ի հնչյունական կառուցվածքը:

Գալով «եկեղեցական հանդես շրջագայությամբ» > «ոչ կանոնավոր բանակի անդամ» իմաստային անցմանը՝ կարծում ենք, այստեղ ոչ մի դժվարություն չկա, քանի որ «եկեղեցական հանդես շրջագայությամբ» իմաստը հեշտությամբ կարող էր ծագել «ուղեկցող խումբ» նշանակումից:

Ելակետ ունենալով խաչակրաց արշավանքների ժամանակ հայերի և իսպանացիների ուղղակի շփումները՝ կարելի է ենթադրել, որ հայերը խաչակիրների կանոնավոր բանակին ուղեկցող միավորումներին կոչել են *թափուր* – «ուղեկցող խումբ» անունով:

Հայերեն *թափուր* բառի ծագումը հայտնի չէ, սակայն հաշվի առնելով իմաստային որոշ մերձավորությունը՝ կարելի է կցել *թափ* արմատին, որով կազմված են *թափել* և *թափառել* բայերը: Սրանցից առաջինն ունի նաև «հափշտակել, կողոպտել, տարագրել» իմաստները:

Ուշագրավ է նաև նույն արմատը ներկայացնող *թափթփուկ* – «խուժան» բառը, որի իմաստը բավականին մոտ է «ոչ կանոնավոր բանակի անդամ» նշանակմանը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ իսպաներեն *isahúr* (<*iafur*) բառի ստուգաբանական բոլոր առաջարկներից որոշ սրբագրումներով ուժի մեջ է մնում Ժ. Կորոմինեսի կարծիքը՝ կապված հայերեն *թափ* – արմատի հետ:

ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Real Academia Española, Diccionario de la Lengua Española, Madrid, 2001, t. II, p. 2123.
2. P. Monlau, Diccionario Etimológico de la Lengua Castellana, Buenos Aires, 1946, p. 1067.
3. Joan Corominas, Breve Diccionario Etimológico de la Lengua Castellana, Madrid, 1996, p. 553.
4. Real Academia Española, Diccionario de la Lengua Española, Madrid, 1992, t. II, p. 1933.
5. Carroccio, Diccionario de la Lengua Española, Barcelona, 1985, t. III, p. 1354.
6. Clave, Diccionario de Uso del Español Actual, Madrid, 2001, p. 1723.
7. Real Academia Española, Diccionario de la Lengua Española, Madrid, 2001, t. II, p. 2123.
8. ԱՌդ:
9. Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 167:

В. САРКИСЯН

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ВАРИАНТЫ ИСПАНСКОГО СЛОВА *tahúr* “ЗЯЯДЛЫЙ ИГРОК”

В испанском языке слово *tahúr* (<*tahur*) “игрок” впервые засвидетельствовано в XIII веке. Были даны различные этимологии этого слова, и две из них ориентированы на армянские параллели. Испанский лексикограф Хуан Короминес считает арм. *thapur* “пустой, покинутый” результатом армяно-испанских прямых контактов во время Крестовых походов. Вторую версию предлагают авторы нового издания академического словаря испанского языка 2001 года. Здесь речь идет об арм. *takavor*, *takvor* “царь” (через арабский источник), без необходимого обоснования семантических трудностей.

Автор представляет разбор всех аспектов этих этимологий и приходит к заключению, что наиболее предпочтительным следует считать сопоставление исп. *tahúr* “игрок” — арм. *taphor* “процессия, шествие”.

V. SARGSYAN

ETYMOLOGICAL VARIATIONS OF SPANISH *tahúr* – GAMBLER

The Spanish word *tahúr* (<*tahur*) was first witnessed in the 13th c. Different etymologies of this word were suggested, two of which go to Armenian parallels. Spanish lexicographer Juan Korominez considers Arm. *thapur* (vacant) to be caused by Armenian-Spanish direct contacts in the times of Crusades. Another version is suggested by the authors of the new academic editions of Spanish, 2001. It goes to Arm. *takavor*, *takvor* via an Arabic source without giving any explanation to semantic reservations.

The paper presents the analysis of all these etymologies and concludes that the most preferable etymological relation is Sp. *tahúr* “gambler” – Arm. *taphor* “procession”.